ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԼՅՈՒՍԻ ՁԱՆՎԵԼՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋ

2024

Բովանդակություն

ԻՆՉ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ի՞ՆՉ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- Ապահովագրված անձինք ապահովագրական ընկերությանը վճարում են փոքրիկ գումարներ (ապահովագրավճար), ինչի արդյունքում ընկերությունում կուտակվում է մեծ գումար
- Երբ ապահովագրված անձանցից որևէ մեկի հետ որևէ պատահար է տեղի ունենում, ապահովագրական ընկերությունը կուտակած միջոցներից հատուցում է առաջացած ծախսերը
- Ապահովագրությունը խոշոր անկանխատեսելի վնասները վերածում է փոքր կանխատեսելի ծախսերի: Դա թույլ է տալիս ծածկել անկանխատեսելի պատահարից վնասը

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- Ապահովագրությունը լինում է կամավոր և պարտադիր
  - Կամավոր ապահովագրությունը ձեր ցանկությամբ ապահովագրական ընկերության հետ ապահովագրության պայմանագրի կնքումն է
  - Պարտադիր ապահովագրությունը ձեր կամքից անկախ, օրենքով սահմանված պահանջ է ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու վերաբերյալ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- Ապահովագրել կարելի է ինչպես գույքային (մեքենա, տուն և այլն), այնպես էլ ոչ գույքային (առողջություն, կյանք և այլն) շահը
- Գույքային շահը կարող է ապահովագրվել տարբեր ռիսկերից՝ հրդեհից, պայթյունից, գողությունից, փոթորկից, սողանքից կամ այլ ապահովագրական պատահարներից
- Ոչ գույքային շահերը կարող են ապահովագրվել տարբեր պատահարներից

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- Ոչ գույքային շահերի հետ կապված պատահարներից են
  - Պատասխանատվության ապահովագրություն. երրորդ անձին անզգույշ կամ ոչ միտումնավոր կերպով պատճառված վնասների ապահովագրություն
  - Առողջության ապահովագրություն. հատուցման ենթակա են առողջության վերականգման և բուժման ծախսերը
  - Դժբախտ դեպքերից ապահովագրություն. դժբախտ պատահարի հետևանքով մահվան կամ առողջությանը պատճառված վնասի դեպքում ֆինանսական ծախսերի հատուցում
  - Կյանքի ապահովագրություն. անձի հետ կապված իրադարձության ապահովագրում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- Հայաստանում ապահովագրական համակարգը դեռևս չի գտնվում այն մակարդակի վրա, որի վրա գտնվում է զարգացած կամ այլ զարգացող երկրներում
- Ապահովագրական ոլորտը Հայաստանում զարգացում ապրեց 2011թ.-ից, երբ ներդրվեց ավտոքաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը (ԱՊՊԱ)
- Պարտադիր ապահովագրությանը զուգահեռ ՀՀ քաղաքացիները սկսեցին առնչվել նաև ապահովագրության կամավոր տեսակների հետ՝ ճամփորդության, առողջության, բնակարանների, ԿԱՍԿՈ և այլն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- Ներկայումս Հայաստանում գործում են 6 ապահովագրական ընկերություններ՝ «Արմենիա Ինշուրանս», «Ինգո Արմենիա», «Նաիրի Ինշուրանս», «Ռեսո», «Ռոսգոսստրախ – Արմենիա», «Սիլ Ինշուրանս»: Նրանք տրամադրում են պարտադիր և կամավոր ոչ կյանքի ապահովագրական պրոդուկտներ, այդ թվում
  - ԱՊՊԱ,
  - առողջության կամ բժշկական ապահովագրություն,
  - դժբախտ պատահարներից ապահովագրություն,
  - տրանսպորտային փոխադրամիջոցների ապահովագրություն կամ ԿԱՍԿՈ (օդային/ցամաքային),
  - գույքին հասցված վնասներից ապահովագրություն,
  - բեռների ապահովագրություն,
  - պատասխանատվության ապահովագրություն,
  - ֆինանսական վնասների ապահովագրություն,
  - ճամփորդության կամ աջակցության ապահովագրություն, և այլն:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- 2022 թվականը Հայաստանի ապահովագրական շուկայի համար բարենպաստ տարի է եղել: 2021 թվականին շահույթի շեշտակի անկումից հետո 2022-ին ընկերություններին հաջողվել է էապես մեծացնել շահույթը: Հաճախորդներից հավաքագրված ապահովագրավճարները շատ ավելի արագ են աճել, քան նրանց հատուցումները: Դա նպաստել է շուկայի շահույթի կտրուկ աճին

- 2022 թվականին Հայաստանում գործող 6 ապահովագրական ընկերությունները միասին հաճախորդներից հավաքագրել են 62.2 մլրդ դրամի ապահովագրավճարներ և հատուցել 29.2 մլրդ դրամ

- 2021 թվականի համեմատ ապահովագրական շուկայի ապահովագրավճարների ընդհանուր ծավալն աճել է 12.3 մլրդ դրամով կամ մոտ 25%-ով

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- Միևնույն ժամանակ, հատուցումներն ավելացել են 727 մլն դրամով կամ 2.5%-ով: Այդպիսով, հավաքագրված ապահովագրավճարների աճը շատ ավելի մեծ է եղել, քան հատուցումներինը, ինչն էլ նպաստել է շահույթի աճին
2021 թվականին ապահովագրական ընկերությունների շահույթը մոտ 80%-ով կրճատվել էր, իսկ արդեն 2022-ին, ինչպես վկայում են ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները, այն 5.5 անգամ աճել է

- 2022 թվականին ապահովագրական ընկերությունների ապահովագրավճարները ամենաշատը գոյացել են ԱՊՊԱ-ի գծով՝ ընդհանուր ապահովագրավճարների մոտ 43%-ը և նախորդ տարվա համեմատ ԱՊՊԱ-ի գծով ավելացել մոտ 15%-ով: Անձնական ապահովագրության գծով վճարները (հիմնականում առողջապահության ապահովագրությունը և փոքր մասն էլ՝ դժբախտ պատահարներից ապահովագրությունը), ավելացել են 27%-ով

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ